ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

20.02.2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Հ. Լպուտյան:

Հանձնաժողովի անդամներ՝

Վարչության աշխատակազմի պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա. Գասպարյան,
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գևորգյան,
Վարչության աշխատակազմի արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ՝ Ն. Մելքոնյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Սահակյան:

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Եղիազարյան:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 1000000 ՀՀ դրամ:

1.Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության շենքում ք.Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, փետրվարի 20-ին ժամը 10:00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.

N/N	Մասնակցի անվանումը	Կազմակերպության հասցեն
1	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
2	«ՕՎՆԵ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 43/10
3	«Նիգ-Ապարան» ՍՊԸ	ՀՀ, ք. Ապարան, Մ. Բաղրամյան թիվ 3
4	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ.31

3. Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 « Մ-Բի-Ռ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.2 « ՕՎՆԵ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ

3.3 «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ

3.4 «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ

4.Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 **«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի, որի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը (ներառյալ հայտի ապահովումը և գնային առաջարկը) հաստատված չեն մասնակցի կողմից:

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնային առաջարկ		
		Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	*2*	*3*	*4*	*5*
1	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ	1666667	333333	2000000
2	«ՕՎՆԵ» ՍՊԸ	2312267	268333	2580600
3	«Նիգ-Ապարան» ՍՊԸ	2998000	-	2998000
4	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ	3064916.67	612983.33	3677900

«ՕՎՆԵ» ՍՊԸ-ն հանդիսանում է ԱԱՀ վճարող միայն պահեստամասերի, քսանյութերի և այլ օժանդակ նյութերի մասով, ուստի ծառայության մասով ԱԱՀ չի հաշվարկվել:

6.Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հարցումներ չեն ստացվել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել,

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) «Մ-Բի-Ռ», «ՕՎՆԵ» և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ների ներկայացված հայտերը գնահատել բավարար,

բ) Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «ՕՎՆԵ» ՍՊԸ-ին և երրորդ տեղ՝ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին,

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

4. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝	**Հ. Լպուտյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ա. Գասպարյան**	.....
	Գ. Գևորգյան	.....
	Ն. Մելքոնյան	.....
	Ա. Սահակյան	.....
Քարտուղար՝	**Ա. Եղիազարյան**	.....